

...ԻՍԿ ՆԻՄԱ ԴԷՊԻ ՊԵՅՐՈՒԹ

«ՅԱՆԿԸ ՊԻՏԻ ՀԱՇՈՒԷ 17 ԱՆՂԱՍ»

ՇԱՐԻՐԻ ԵՐԱՊԱՐԱԿ Կ'ԻՋՆԵ

«ՊԵՅՐՈՒԹԻ ՄԻԱՑՄԱՆ» ՆՇԱՆԱԽՕՍԲՈՎ

Վարչապետ Ռաֆիկ Հարիրի երկն յայտարարեց, որ ինք Պէյրուսի ընտրապայքարին կը մասնակցի Պէյրուսի միացնելու սկզբունքով, որովհետեւ, ըստ իրեն, Պէյրուսի շերտակայանող երեսփոխանները 9 մասի բաժնած են Պէյրուսի:

Հարիրի ըսաւ, որ պիտի կազմէ գրեթէ ամբողջական ցանկ մը, այսինքն՝ 19 պիտուներու համար պիտի ներկայացնէ 17 թեկնածու, իսկ ձգելով մէկ սիւննին եւ մէկ մարունի տեղ: Ան ըսաւ, որ ուսման «սեղանի տակ» համաձայնութիւններ կը գոյացնեն «Հոգալի» ին եւ Նաթան Ուաքիմի հետ, «մինչդեռ մեր ամբողջ աշխատանքը տեղի կ'ունենայ սեղանի վրայ», աւելցուց ան:

Հարիրի կը խօսէր իր ընտրապայքարի ներկայացուցիչներու մէկ հաւաքին: Ան նկատել տուաւ, որ «Հարաւը միացնել կեցուածք ունի, մինչդեռ Պէյրուսի ալ պէտք է: Եթէ կը սիրենք մեր մայրաքաղաքը, պէտք է այս ընտրութիւններէն դուրս գանք միացնել խմբակով մը», ըսաւ վարչապետը եւ կոչ ուղղեց, որ ընտրողները չուէն արհեստագործական կողմէն, որուն մէջ ներկայացուցիչներ պիտի ըլլան ժողովուրդի բոլոր դասակարգերէն:

ՀԻՒՍԻՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆՑԱՆ ԽԱՂԱՂ, ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ ՊԻՏԻ ԸԼԼԱՆ ԽԱՌՆ



Փաստաթուղթերու ստուգում



Սխալներու սրբագրումից համար



Միմայի մէջ, քուէարկութեան կեդրոնի մը առջեւ



Սպասում՝ ակումբից բակը

Փոփոխութիւններ եղած է համատարած: Զէյթոն դէտեր այս երեւոյթը նկատեցին իրենց առողջ ժողովուրդավարութեան արտայայտութիւն, այն իմաստով, որ քուէարկողը ի վերջոյ ինք կ'որոշէ իր թեկնածուները, թէեւ Օմար Քարամէլ եւ այլ ղեկավարներ այս երեւոյթին մէջ տեսան համակիրներու կարգապահութեան որոշ խախտում:

Գլխաւոր մրցակիցները (ընդամենը 5 ցանկերէ եւ անհատ թեկնածուներէ) երկու ցանկերէն: Քարամէլ - Ֆրենտիէ ճակատի «Միասնականութիւն եւ Բարգաւաճում» ցանկի եւ «Բարգաւաճում եւ Փոփոխութիւն» ցանկի, որուն մաս կը կազմէին Ահմէտ Քարամէլ եւ նախարար Օմար Միսքաուր: Պէյրուսի ղեկավարներ կարելի չէր ընտրութեան ցանկէ կամ «ընդդիմադիր ցանկ», որովհետեւ երկուքն ալ, ինչպէս ալ ցանկեր, կ'ընդգրկէին իշխանութեան մօտիկ եւ ընդդիմադիր ղեկավարներ: Քուէարկութիւններ անցաւ ընդհանուր առմամբ խաղաղ միջնորդութիւն մէջ:

յի մը կողմէ միջամտութիւններու մասին հասած գանգատներուն գծով ստուգում կատարուած է, սակայն ի յայտ եկած է որ ոչ ան եւ ոչ ալ բանակային կամ Ն. Ա. Ուժերու ալ տարրեր միջամտութիւն կատարած են:

Պուշրուս Հարպ, որ կանոն յետմիջօրէին գոհունակութեամբ արտայայտուած էր քուէարկութեան ցանկերէն եւ միջնորդութեան մասին, աւելի ուշ գանգատներ եւ դժգոհութիւններ արտայայտեց:

Ներքին գործոց նախարար Միշէլ Մոր երեկոյեան ժամը 9ին մամուլի ասուլիս մը տալով, հաստատեց, որ պահանջութիւններ եղած է կայուն, մեղադրանքները մեծ մասամբ անհիմն են եւ եկած են անոնցմէ, որոնք շահելու յոյս չունէին: Ան վկայակոչեց Սիլվան Ֆրենտիէի այն խօսքը, թէ իշխանութիւնը բոլոր թեկնածուներուն հետ պահած է հաւասար հեռավորութիւն:

Ըստ ներքին գործոց նախարարութեան եւ մամուլի տեղեկագիրներուն, Հիւսիսի մէջ մասնակցութեան համեմատութիւնը 42.5% 45% առ հարիւր է: Նուագագոյն համեմատութիւնը արձանագրուած է Պշարրէի մէջ, 23% առ հարիւր:

Հ. Յ. ԳԱՇՆԱԿՈՒԹԵԱՆ
ՄԵՔԵՆԱՆ

Ինչպէս Լեռնալիբանանի ընտրութեանց օրը, նոյնպէս եւ երէկ, Հ. Յ. Դաշնակցութեան ընտրական մեքենան բանեցաւ աշխոյժ:

Թրիփոլի մեր ակումբը առաւօտեան ժամերէն սկսեալ արտասովոր վիճակ ունէր. սրահը եւ բակը վերածուած էին «աշխարհ» քի ճոցի: Պէյրուսի եւ ամբարանոցներէ, իսկ մասնաճիւղները, մեր ակումբներուն կողմէ տրամադրուած օթոպիւսներով եւ ինքնաշարժներով գացին Թրիփոլի եւ շրջանի մեր ակումբէն ցուցմունք եւ օժանդակութիւն ստանալով, քուէարկեցին իրենց համար սահմանուած կեդրոններուն մէջ: Միմայի եւ Թրիփոլի մէջ, «զուտ հակակաւ» 6 սրնտուկներ կային, իսկ ուսման քուէարկեցին խառն կեդրոններուն մէջ: Հայքուէարկողները բարձր էր: Թրիփոլի մեր ակումբի ընտրական մեքենան կարելի սահմաններուն մէջ կատարեց մետասաներորդ պահու սրբագրումներ եւ ստուգումներ:

Կէսօրէ ետք, Հ. Յ. Դ. Լիբանանի Կ. Կոմիտէի պատուիրակութիւն մը, որուն մաս կը կազմէր ընտրեալ երեսփոխան ընկտութ: Սեպուհ Յովնանեան, Թրիփոլի ուղղուեցաւ եւ շրջանի մեր պատասխանատուներուն հետ աշխատանքներու գնահատութեան կատարելէ ետք, այցելութիւններ տուաւ Նախարարութեան, Սիլվան Ֆրենտիէի, Ահմէտ Հարպիսի եւ Մորիս Ֆատիլի:

ԴԱՆԻԱՆ
ՔՈՒԵԱՆԱՄԱՐ

Քուէարկութիւններ փակուած ժամը 9ին կամ քանի մը վայրկեան ետք: Ապա սկսաւ քուէահամարի եւ շուտով բացայայտ դարձաւ, որ 1300 սնտուկներու պարունակութեան ստուգումը պիտի խչ շատ աւելի երկար ժամանակ, քան ինչ որ եղած էր Լեռնալիբանանի պարագային: Կէս գիշերուան մօտ, Թրի-



Ցանկերու վրայէն ստուգում



Ստուգում իրարմ քայտերու

փոլի սերայէն հաղորդուեցաւ, որ համարած քուէները չեն անցնիր քայտի մը տասնեակի սահմանները: Իսկ նախնական արդիւնքները ցուց տուած են, որ առաւելագոյն թիւով քուէներ պահանջարկներուն հետ աշխատանքներու գնահատութեան կատարելէ ետք, այցելութիւններ տուաւ Նախարարութեան, Սիլվան Ֆրենտիէի, Ահմէտ Հարպիսի եւ Մորիս Ֆատիլի:

Նշենք, որ Հիւսիսի ցանկերուն վրայ կան անուններ 580.000 քուէարկողներու: Քուէահամարի կատարելէ ետք, Հիւսիսի խորհրդարան հասցուեցաւ պիտի ըլլայ իր 28 ներկայացուցիչները: Այսպէսով, Լեռնալիբանանի արդիւնք-

ներուն հետ, խորհրդարանի յաջորդ կազմին գրեթէ կէսը ընտրուած պիտի ըլլայ (128ի վրայ 63): Մնացեալները պիտի գան Պէյրուսի, Հարաւէն եւ Պէքաւան:

«ՀԸԶՊԱԼԼԱ» իրենց քուէարկութեան կարգ մը ղեկավարները: Թեկնածու Ապտալիս Քասիր պահանջեց, որ պաշտօնական արդիւնքները երեքշարթիին (վաղը) առաջ չի նախատեսուած, որ արդեօք չափաւորակաւ անցնին կը նշանակէ՝ «Հոգալի» ղեկավարութեան սահմանափակումը, իսկ չէյն Նալիմ Քասիմ ըսաւ, որ իշխանութիւնը վստահելի չէ ընտրութիւնները կառավարելու:

**SECURITE
PROFESSIONNELLE
MAXI A PRIX MINI**

Depuis 1898, NUGUE propose des coffres-forts français d'une résistance exceptionnelle en acier réfractaire et antichalumeau.

Les coffres-forts Nugue sont conçus pour protéger vos documents, bijoux, supports informatiques et papiers contre vol et incendie. Ils sont disponibles en différents modèles chez Jossar, agent exclusif au Liban.

**NUGUE
FRANCE
MAISON FONDÉE EN 1898
Agent exclusif**

JOSSAR s.a.l.

Rue du Fleuve - Face E.D.L. - Tél: (01) 446973 - 444376
Fax: (01) 446821 - Journeil: (09) 830763
Dora: (01) 582096

...ԻՍԿ ՀԻՄԱ ԴԵՊԻ ՊԵՅՐՈՒԹ

ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

— 1996 —

ԸՆՏՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ԿԱՄԱՒՈՐՆԵՐՈՒ ՓԱՂԱՆԳԸ՝ ԱՅՊ ՏՂԱՆՔԸ ՈՒ ԱՂՋԻԿՆԵՐԸ

Կիրակի, 18 Օգոստոս: Հ. Յ. Դ. ա-կումբներուն մէջ այդ օր առաւօտեան կանուխ ժամերէն արտակարգ եռուզեռ է: Ակումբներուն սրահներուն արտա-քին կահաւորումը ամբողջութեամբ փոխուած է, եւ անոնք վերածուած են ընդունելութեան ընդարձակ սրահնե-րու, ուր բազմաթիւ երիտասարդներ ու երիտասարդուհիներ նստած են սեղան-ներու ետին ու անհամբեր կը սուսեցն քուէարկողներու ժամանումին: Աւելի քան 6 ամիս առաջ սկսուած արձանագ-րութիւններու, ստուգումներու եւ ըն-տանեկան տախտակներու կազմութեան նախապատրաստական աշխատանքները այսօր ուլիտի կենդանացան, ձեւ եւ գոյն ուլիտի առնեն: Ամէն ոք ուլիտի տեսնէ գործին արդիւնքը:

Իւրաքանչիւր աշխատող գիտէ իր պարտականութեան բնոյթը: Անոր յըս-տակօրէն բացատրուած է, թէ ինչ ուլիտի ընէ, ուրկէ՝ ուլիտի սկսի իր գործը եւ ուր ուլիտի վերջացնէ: Կայ դուրսը՝ ճամբուն մէջ շարուած քուէարկողները փոխադ-րող ինքնաշարժներուն շարքը եւ կար-գը ճշդող խմբակ իր առաջնորդին հետ: Վարորդները կը կազմեն ալ խումբ մը: Քուէարկողներուն ընկերացող եւ անոնց անհրաժեշտ ցուցմունքները տուող երիտասարդներն ու երիտասար-դուհիները կը կազմեն տարբեր խումբ մը: Լարուած ժամացոյցի մը նման կը գործէ նաեւ անմիջական ուղղութիւն տուող խումբը: Այս խումբին անդամ-ները ամէն տեղ են: Եթէ քուէարկող մը շուտաւ առ ու շուրջը կը դիտէ մէկու մը օժանդակութեան դիմելու համար, վրայ կը հասնի «անմիջական»ի մէկ անդամը եւ կ'ուղղէ, անհրաժեշտ ցուցմունքնե-րը կու տայ, ու հարց չի մնար: Մատա-

կարարներու խումբը աշխատողներու ալ փաղանգ մըն է, որուն անգամները անդադար կը շրջագային տարբեր շըր-ջաններ, ջուր, գովաջուցիչ, բուրբ, գեթ-նական ուլիտը, եւ ալ անհրաժեշտ իրեր կը հասցնեն բոլորին: Ընտրական մեծ մեքենան կը բանի, որովհետեւ անոր բաղկացուցիչ կարեւոր լծակները կա-մաւորները հեզասահօրէն կ'աշխատին եւ մեքենան կը ճնշէ, շարժակները աշ-խուժօրէն կը գործեն:

Կամաւորները: Առանց հրաւերներու սուսեցում, գործին ամբողջ շաւանու-թիւնը եւ կարեւորութիւնը ըմբռնած այդ տղաքն ու աղջիկները, որոնց միայն ներ-կայութիւնն իսկ մթնոլորտը պայծառա-ցուց, գործին ծանրութիւնը վերածեց աշխատանքային հանգիսի: Չես գիտեր ուրկէ կու գան եւ գործը աւարտելէ ետք այդպէս լոկիկ մնջիկ ուր կը հեռանան: Յանկարծ կը նշմարես, որ շուրջը մէկը չի գտնուիր: Սրահները պարպուած են, բայց գործը ամբողջացած է, քուէար-կող ալ չկայ: Քուէատուփերը փակուած են: Երբ գործը աւարտած է, ուրեմն ալ

կամաւոր չկայ: Կամ հակառակը: Կա-մաւոր աշխատողները հրապարակէն կը քաշուին, երբ գործը աւարտած է: Անոնք պարզապէս աչդուլեւ են: Կու գան, կ'աշ-խատին, կը հեռանան:

Վարդանը այս կամաւորներէն մէկն է: Սովորական օրերուն հոն է եւ հոն չէ: Ոչ ոքի կը զգացնէ իր ներկայութիւնը, թեւեւ հասակաւոր է եւ ունի ամուր կազ-մուածք մը: Ամիսներ առաջ, երբ իսրա-լէիեան ռմբակոծումներուն պատճառով բազմահազար հարաւցիներ Պէյրութ ա-պատանցեցան, ալ լոյց շարքին, Հայ հա-մայնքն ալ իր բոլոր հոսանքներով փու-րաց օժանդակութիւններ հասցնել հա-րաւցի իր եղբայրներուն եւ քոյրերուն: Օժանդակութիւններու հաւաքման, դա-սաւորման եւ փոխադրութեան աշխա-տանքները երկարեցան շաբաթներու վրայ եւ Վարդանը հոն էր: Առաւօտուն կու գար մեծ գործարանի ուղշտօնեայի մը նման, կ'աշխատէր ու կ'ըլլար վեր-ջին հեռացողը: Նոյնիսկ միւս կամա-ւորները կը հիւսնային այս երիտասա-րդին նկարագրիին: «Գլուխս կը վերցնեմ հագուստի կապոցներուն վրայէն, ար-դէն դեմս կ'անգնած է եւ ծանր կապոցը փետուրի մը նման կը նետէ փոխադրա-կառքին կոնակը», կ'ըսէ աշխատանքնե-րը համակարգող պատասխանատու ըն-կերուհին:

Վարդանը 18 Օգոստոսին առաւօտ-եան շատ կանուխ ժամերէն մինչեւ ուշ երեկոյ միւս բոլոր կամաւորներուն հետ աշխատեցաւ եւ, երբ տեղեկ ու ընտրու-թիւններուն մասին տեղեկութիւններ լսելու համար պատկերասփիւռի փոքր պատահներուն առջեւ հաւաքուեցան բոլորը, հեռացաւ միւս բոլոր կամաւոր-ներէն նման:

18 Օգոստոսին մեր կամաւորները անգնահատելի աշխատանք կատարեցին: Անոնց հսկայ բանակը երկար ժամեր «գրաւեց» մեր ակումբները, կեդրոննե-րը եւ... սիրտերը: Առանց անոնց վստա-հաբար գործը շատ բան ուլիտի տուէր: Ամիսներ շարունակ շէնք-շէնք բարձ-րացող ու արձանագրող տղաքն ու աղ-ջիկները, ամէն օր ցանկերու հսկայ տըր-քակները թերթատող, ստուգող եւ սըր-բագրող տղաքն ու աղջիկները, ընտրու-թիւններուն օրը աչ ու ձախ վազվզող, բոլորին հասնող տղաքն ու աղջիկները, եւ գործին աւարտին՝ ուշ գիշերին լուռ, առանց իօսքի հրաժեշտ տուող տղաքն ու աղջիկները եղան Գործին ալը, ուղ-նասիւնը:

Կամաւորները 18 Օգոստոսին գործը յաջողցուցին: Յառաջիկայ Կիրակի 1 Սեպտեմբերին, Պէյրութի ընտրութիւն-ներուն, անոնք գործը դարձեալ ուլիտի յաջողցնեն:

Անհամբեր մի՛ ըլլաք: Սպասեցէք ու կը տեսնէք:

ԱՐՄԷՆ ԱՂՏԱՆԵԱՆ

«ԱՆՅԵԱԼԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՅՈՒԹԻՒՆԸ» — 1957

1957 թուականի երեսփոխանական ընտրութիւնները Պէյրութի քուէարկութիւնները տեղի ունեցած են Կի-րակի, 9 Յունիսին:

Երկուշաբթի, 10 Յունիս թուակիր «Ազգակ» օրա-թերթին մէջ կը կարդանք, որ ընտրութիւնները տեղի ունեցած են կատարեալ հանդարտութեան եւ բացար-ձակ ազատութեան միջնորդութիւնով: Հակառակ խու-վարար տարրերու միջադէպեր ստեղծելու ճիգերուն ու փորձերուն, ընտրողները կարգապահօրէն կատարած են իրենց նուիրական պարտականութիւնը, ի խնդիր այս երկրի անկախութեան եւ ազատութեան:

Նոյն տեղը կը կարդանք, որ Լիբանանի մէջ չէ պատա-հած ընտրութիւն մը, որ այդքան մեծ հետաքրքրութիւն ստեղծած ըլլայ, որքան 1957 թուականի Յունիս 7-ի ըն-տրութիւնը, եւ այս՝ հիմնուելով քուէարկութեան մաս-նակցողներու համեմատութեան վրայ:

Պէյրութի շրջանէն ընտրուած են 2 հայ երեսփոխա-նք:

Մեթր խաչիկ Պապիկեան ստացած է 18.400 քուէ, իսկ ընկ. Սովսէս Տէր Գալուստեան ստացած է 15.661 քուէ:

Ընկ. Սովսէս Տէր Գալուստեանի ցանկակից, հայ կա-

թողիկէ ներկայացուցիչ Ժոզէֆ Շատէր ստացած է 16.670 քուէ:

Այսպիսով, Պէյրութի շրջանէն երեսփոխան ընտրու-ած են ընկ. Սովսէս Տէր Գալուստեան, մեթր խաչիկ Պապիկեան եւ հայ կաթողիկէ Ժոզէֆ Շատէր:

Ուշագրաւ է, որ Պէյրութի ընտրութիւններէն 3 օր առաջ հայ առաքելական աթոռի թեմապետ Յակոբ Խո-րէն Թահան քաջած է իր թեմապետութիւնը ի նպաստ մեթր խաչիկ Պապիկեանի: Հակառակորդ ցանկով թեկ-նածու ներկայացած է ին Նուպար Թուրսարգիսեան, Նա-գարէթ Ղարիպեան եւ Հրաջ Շամբան: Երեսփոխանա-կան ընտրութիւններու Պուրժ Համուտի շրջանի քուէար-կութիւնները տեղի պիտի ունենային 1957 Յունիս 16-ին, Կիրակի օրը:

Հ. Յ. Դաշնակցութեան թեմապետն այս անգամ ալ պրն. Տիգրան Թոսպաթն էր: 16 Յունիսին տեղի ունենա-լիք քուէարկութիւնները չկատարուեցան Պէյրութի մէջ, որովհետեւ հակառակորդ ճակատի թեմապետն՝ Նու-պար Նոյսուտեան Չորեքշաբթի 12 Յունիսին, քաջեց իր թեմապետութիւնը եւ իրրեւ հայ առաքելական համայնքի միակ թեմապետն՝ պրն. Տիգրան Թոսպաթ ինքնաբերա-րար երեսփոխան ընտրուեցաւ:

«ԱՆՅԵԱԼԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՅՈՒԹԻՒՆԸ» — 1960

Ինչպէս նախորդ ընտրութիւններուն, 1960 քուականի երեսփոխանական ընտրութիւններուն եւս Հ. Յ. Դաշնակ-ցութիւնը Մեթրի եւ Պէյրութի շրջաններուն մէջ իր բեկ-նածու քուէարկութեան իր անուանական ցանկին եւս համադրեց:

1960 քուականի երեսփոխանական ընտրութիւնները տեղի ունեցան Յունիս ամսուան ընթացքին:

Յունիս 12-ին տեղի ունեցան Մեթրի շրջանի ընտրու-թիւնները: Մեթրի շրջանէն Հ. Յ. Դաշնակցութեան բեկնա-ծուն մեր վարդապետ Շամբանը էր: 1957-ի ընտրութիւննե-

րուն Հ. Յ. Դաշնակցութեան բեկնածուն եղած ու երեսփո-խան ընտրուած Տիգրան Թոսպար բեկնածու ներկայացած էր համառակարդ ցանկով, մինչ նուպար Նոյսուտեան անհատ բեկնածու էր:

Նախորդ ընտրութեան պատկեր 1960-ին չընկերեցաւ: Յիշեցնենք, որ 1957-ի ընտրութիւններուն Մեթրի շրջանի հայ առաքելական աթոռի համար բեկնածու ներկայացած նուպար Նոյսուտեան բաւած էր իր բեկնածութիւնը:

Ընտրութիւնները բեկնածուն էր խաղող մրուարտի մը մէջ տեղի ունեցան Կիրակի՝ 12 Յունիս 1960-ին:

Յաջորդ օրը պարզ դարձաւ, որ ծայրերու շախմատի մեծամասնութեամբ երեսփոխան ընտրուած է Հ. Յ. Դաշ-նակցութեան բեկնածուն՝ մեր վարդապետ Շամբանը:

15 Յունիս 1960-ին երեսփոխանական ընտրութիւննե-րու վերջնական արդիւնքները: Այդ արդիւնքներուն հա-մաձայն Հ. Յ. Դաշնակցութեան բեկնածուն՝ մեր վարդ-գէտ Շամբանը ստացած էր 17.123 քուէ, որոնցմէ 3482 քուէ Պուրժ Համուտեան, Տիգրան Թոսպար ստացած էր 15.282 քուէ, որոնցմէ 418 քուէ Պուրժ Համուտի շրջանէն, իսկ նուպար Նոյսուտեան ստացած էր 1512 քուէ, 12 քուէ Պուրժ Համուտի շրջանէն:

Քուէներու պատկերը յստակօրէն ցոյց կու տայ, թէ Պուրժ Համուտեան ինչպիսի վնասող դեր խաղացած է ընտ-րութիւններուն ելքը որոշելու իմաստով:

Պէյրութի շրջանէն ընտրութիւններ տեղի ունեցան Մեթ-

րի ընտրութիւններէն շարք մը հա՛մայնքն՝ 19 Յունիս 1960-ին:

Հայ Առաքելական համայնքին իրաւունքը հանդիսա-ցող երեւոյթ արտոնութեան համար Հ. Յ. Դաշնակցութիւնը ներկայացուցած էր երեսփոխան բեկնածուները:—

Ընկ. Սովսէս Տէր Գալուստեան, մեր խաչիկ Պապիկե-ան եւ Սուրբ Խանութիւն: Հակառակորդ ցանկով բեկ-նածու ներկայացած էին Վազգէն Պապիկեան, Էմիլ Խակի-սեան եւ Հրաջ Շամբան:

Հայ Խորհրդիկ համայնքին համար նախատեսուած արո-

ւին Հ. Յ. Դաշնակցութեան զօրավիգ կանգնեցաւ փա-ղանգաւոր բեկնածու Ժոզէֆ Շատէրի, մինչ հակառա-կորդ ցանկին բեկնածու ներկայացած էր նուպար Թուր-սարգիսեանը, մինչ, նոյն արտոնի համար, որպէս անհատ բեկնածու ներկայացած էր նաեւ Բարգէն Մկրտիչեան:

Ընտրութիւններէն հանկ մը ժամ հա՛մ արդէն իսկ յստակ դարձաւ, որ բոլոր 4 արտոններն ալ շահած են Հ. Յ. Դաշ-նակցութեան բեկնածուները եւ այն ալ ծայրերու շախմա-տի մէջ մեծամասնութեամբ:

Ընտրութիւններէն 2 օր հա՛մ երապարակուած վերջնա-կան արդիւնքները երեսփոխան պատկերը ունկն:

Ընկ. Սովսէս Տէր Գալուստեան	19.977 քուէ
Խաչիկ Պապիկեան	21.364 քուէ
Սուրբ Խանութիւն	20.719 քուէ
Ժոզէֆ Շատէր	21.765 քուէ
Վազգէն Պապիկեան	11.665 քուէ
Էմիլ Խակիսեան	11.700 քուէ
Հրաջ Շամբան	11.669 քուէ
Նուպար Թուրսարգիսեան	11.197 քուէ
Բարգէն Մկրտիչեան	326 քուէ

Այսպիսով Հայ համայնքը 1960 քուականին ընտրուած խորհրդարանին մէջ ունեցաւ 5 հայ երեսփոխաններ, 3 հայ առաքելական եւ 1 հայ կաթողիկէ Պէյրութի մէջ, 1 հայ առաքելական Մեթրի մէջ:

ՀԱՄԱԽՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՍՆԵԼՈՒ ԴՅՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՐԿՈՒ ՑԱՆԿԵՐՈՒ ԱՌՋԵՒ ԴՈՒՌ ԿԸ ԲԱՆԱՆ

Երեւոյթները կ'ընդարձակուին եւ աւելի լայն են-թահող կ'ընդունին՝ կապուած քաղաքական շա-հերու եւ երկրէն ներս տիրող իրավիճակին:

Կասկած չկայ, որ այս բազմազանութեան մէջ Դաշնակցութիւնը կ'ընդլայնուի հիմնական ու-ժը, նկատի ունենալով, որ երկու ալ կուսակցու-թիւններ եւս՝ Հնչակեանները եւ Ռամկապարտնե-րը կարեւոր դեր կը խաղան: Այս կուսակցու-թիւններուն պէտք է աւելցնել նաեւ հայրենադ-րական եւ ալապան միութիւնները, որոնք գա-լի ազդեցութիւն ունին, եւ որոնք կ'ամ անկախ են եւ կ'ամ այս կ'ամ այն կուսակցութեան ուղե-կիցն են:

Եւ այս ընդհանուր միջնորդութիւն մէջ հայու-թեան ընտրական հարցերը ցարդ կը մնան մութ է անորոշ, նկատի ունենալով, որ Պէյրութի, Մեթրի եւ Չահիկի ոչ բոլոր թեմապետներուն անունները բացայայտուած են՝ Պէյրութի մէջ ցարդ ոչ մէկ թեմապետի անուն բացայայտուած է:

ՊԵՅՐՈՒԹԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

Հայկական լաւատեղեակ աղբիւրի մը համա-

թեմապետներուն բացայայտումը:

Թեմապետներու բացայայտման ուղադրումն մէկ այլ գործուն կը վերաբերի հայութեան ներ-քին հարցերուն, մանաւանդ որ ցարդ պարզ չէ, թէ Դաշնակցութեան եւ մնացեալ երկու կուսակ-ցութիւններէն (Հնչակեան եւ Ռամկապարտ) առնու-ւազն երկուքին միջեւ համաձայնական ցանկ մը պիտի գոյանա, թէ Դաշնակցութիւնը իր ան-դամներէն կ'ամ համակիրներէն կ'ազատուած ցանկ մը պիտի ներկայացնէ:

Նոյն աղբիւրին համաձայն, այս կապակցու-թեամբ տարուող աշխատանքներուն եւ խորհրդ-դակցութիւններուն արդիւնքները ցոյց կու տան, որ համաձայնական ցանկի մը կազմութիւնը դժ-ւար է, սակայն բացառուած չէ: Եթէ այս միջն-որդութիւնը շարունակուի, ապա հեռու չէ, որ Դաշ-նակցութիւնը առանձին ցանկ մը ներկայացնէ, մինչ հնչակեաններն ու Ռամկապարտը աշխա-տանք մը ցանկից միասնական ցանկ մը ներկայացը-նել եւ կ'ամ իւրաքանչիւր կուսակցութիւն «կէս ցանկ» մը ներկայացնէ: Հաւանական է նաեւ, որ այս երկու կուսակցութիւնները համաձայնի աշխատի ցանկի մը շուրջ, որուն մէջ ընդգրկու-

«ՏԻԱՐ»

9

ՊԱՏԱՊԱՇՏՊԱՆՆԵՐ ՏԻԳՐԱՆ ԶԱՆՈՅԵԱՆ ԵՒ ՄԱՐԻՆԱ ԳԱԼԱԲԵԱՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ «ՀԱՅՐԵՆԻԶ» ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Միացեալ Նահանգներու Տեղեկատուական Գործակալութեան (USIA) կողմէ Սփոստոսի սկիզբը Միացեալ Նահանգներ հրաւիրուած էին Հայաստանէն երկու դատաւորներով եւ չորս իրաւաբաններով համալրուած պատուիրակութիւն մը, որոնց շարքին էին նաեւ «Վահան Յովհաննէսեան եւ 30» դատաւարութեան դատաւաշտպաններէն Տիգրան Զանոյեան եւ կարծեցեալ «Իրօ» իմբալի դատաւարութեան դատաւաշտպաններէն Մարինա Գալաբեան: Պատուիրակութեան միւս անդամներն էին՝ դատաւորներ Սամուէլ Կիւրեան եւ Կարինէ Յակոբեան, եւ իրաւաբաններ Աննամար Միքայելեան եւ Տիգրան Սահակեան: Սոյն հրաւերին նպատակն էր հալածող դատաւորներուն եւ իրաւաբաններուն ծանօթացնել օրէնսդրական եւ դատական ամբիկլեան չափանիշներուն: Յուլիս 31ին, USIA-ի կարգադրութեամբ, պատուիրակութիւնը այցելեց Ուշիկէրընի Հայ Դատի Յանձնախումբի գրասենեակը, ուր ընդունուեցան Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ ընկ. Կարօ Արմէնեանի, յանձնախումբի վարիչ տնօրէն Արամ Համբարեանի եւ յանձնախումբի անձնակազմի կողմէ: Պատուիրակութեան փոխանցուեցան Ամբիկլեայի մէջ հայտնիները յուզող հարցերու ուղղութեամբ յանձնախումբի կողմէ: Երկու իրաւաբաններուն մանրամասնութիւնները:

Յաջորդող օրերուն, յանձնախումբը այցելեց Սաքրամենթօ, Սան Ֆրանսիսքօ եւ Ռինօ Նեւատա: Սան Ֆրանսիսքոյի մէջ Տ. Զանոյեան եւ Մ. Գալաբեան հանդիպում մը ունեցան տեղւոյն Հայ Դատի Յանձնախումբին հետ:

Օգոստոս 14-16 պատուիրակութիւնը այցելեց Նիւ Եորք: Հ.Յ.Դ. Նիւ Եորքի «Իրօ» եւ Նիւ Եորքի «Արմէն Գարօ» կոմիտէներու հրաւերով՝ Յուլիս 16ին Տիգրան Զանոյեան եւ Մարինա Գալաբեան հանդիպում մը ունեցան սոյն կոմիտէներու ընկերներուն հետ եւ անդրադարձան զոյգ դատաւարութիւններու վերջին զարգացումներուն մասին:

Օգոստոս 17ին Տիգրան Զանոյեան եւ Մարինա Գալաբեան այցելեցին Պոսթըն, ուր «Հայրենիք»-ի իմբագրատան մէջ ընդունուեցան Հ.Յ.Դ. Արեւելեան Մ. Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչներուն եւ «Հայրենիք»-ի ու «Armenian Weekly»-ի իմբագրական կազմերուն կողմէ: Երկու խօսեցող Կիւրա Ներսիսեան հանդիպման ընթացքին՝

զրոյցը կ'սկսուեցաւ զոյգ դատաւարութիւններու դիմագրուած հարցերուն շուրջ, ուր դատաւաշտպանները յատկապէս շեշտը դրին նախքան ընթացքին պատահած օրէնքի բացառաւոր իրաւունքներուն վրայ: Յաջորդ օրը, Պոսթընի Հայ Դատի Յանձնախումբի կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ զրոյց-հանդիպում մը հասարակութեան հետ, ուր երկու դատաւաշտպանները ընդհանուր գիծերու մէջ ներկայացնելէ ետք երկու դատաւարութիւններուն ընթացքը, պատասխանեցին նաեւ ներկայներու հարցումներուն:

Օգոստոս 19ին պատուիրակութեան մնացեալ անդամներուն հետ Տիգրան Զանոյեան եւ Մարինա Գալաբեան Նիւ Եորքի ճամբով մեկնեցան Երեւան:

«ՆՈՅՆԻՍԿ ԵԹԷ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՐՈՒԱԾԻ ՓՈՐՁ ԵՂԱԾ Է...»

Հարցապնդուելով «Վահան Յովհաննիսեան + 30»-ի եւ «Իրօ»-ի գործով դատուողներուն մասին՝ Հայաստանի նախագահին նախկին խորհրդական Աշոտ Մանուչարեան յայտնած է «Արմէն փրէս»-ին, թէ «Վահան Յովհաննիսեան + 30»-ի եւ միւս հարցերով դատուողներուն դատաւարութիւնը պէտք է փոխադարձ ներուժի դրութեամբ դադարեցնել:

Հատ. Ա. Մանուչարեանի, Նիւ Նոյնիսկ եղած է խումբ մը, որ պետական հարուածի ծրագրի մշակած է, այդ քայլին դիմուած է ստեղծուած պայմաններուն մղուածով: Անոր անխաղաղութիւնը կը վերաբերի դատաւարութեան քաղաքական երեսին, իսկ Նիւ Յիւզ Կան սպանութեան պարագաներ, այդ րաժիւնը պէտք է քննարկուի իրեն քրէական պարագայ, եւ կատարուի մանրամասն քննութիւն: Ան կ'ըսէ, որ գործին առնչութիւն չունեցողներ պէտք է ազատ արձակուին, իսկ մնացեալները՝ թէ՛ Դաշնակցութեան եւ թէ՛ իշխանութեան մասնակցութեան մասին պէտք է փակ քննութիւն կատարել:

ԵՐԷԿ ՄԵԹՆ՝
ԱՅՍՕՐ
ՊԵՅՐՈՒԹ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆԵՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մարդու իրաւունքների պաշտպանութիւնն այս կամ այն երկրում կարելի է գնահատել միայն պատմական համեմատութեամբ: Մարդու իրաւունքները խախտուել, խախտուում եւ կը խախտուեն աշխարհի բոլոր երկրներում: Միեւնոյն երկրում այդ իրաւունքները կարող են բարելաւուել, այնուհետեւ վատթարանալ, իսկ յետոյ նորից բարելաւուել: Կարող է փոփոխուել խախտումների ծիրը: Մարդու իրաւունքների որոշ մասը կարող են պահպանել, միւսները՝ խախտուել: Քանի որ իմ ելույթը հիմնահարցի պատմական անարկը չէ, մենք չենք խորանալ, այլ կը փորձենք համեմատել մարդու իրաւունքները Հայաստանում տարր տարի առաջ եւ այժմ:

Այդ համեմատութիւնը ցոյց է տալիս, որ որոշ իրաւունքների պահպանման հարցում նկատուում է բարելաւում, իսկ որոշների վերաբերելով՝ վատթարացում: Միայն այն փաստը, որ մենք հանգիստ հաւաքուել եւ քննարկում ենք այս խնդիրը՝ բացառաւոր բարելաւում է: Պատկերացնել նման բան տասը տարի առաջ՝ անհնար էր: Տարբեր քաղաքական կուսակցութիւնների, ընդդիմադիր մամուլի, կրօնի ազատութեան, համաշխարհային մշակույթի հետ ծանոթանալու հնարաւորութիւնը առանց վախճանուել, որ այս ամէնի պատճառով դու կը յայտնուես «կուլակում», ի հարկէ, բարելաւում է: Միւս կողմից՝ անշնայտ է այն իրաւունքների վատթարացումը, որոնք պահպանուում էին տասը տարի առաջ: Այսպէս, խ. Հայաստանի Քա-Կէ-Պէ-ում 1982 թ. իմ առաջին հարցաքննութեան ժամանակ քրեալիքը հպարտութեամբ յայտարարեց. «Ի տարբերութիւն ներքին գործոց նախարարութեան, մեզ մօտ յետաքննողներին չեն ծեծում»: 1980-ական թուականներին եւ ոչ մէկի նկատմամբ բռնութիւն չէր կիրաւուում: Իսկ թէ ինչպէս են ստացուել «Դրօ» գործով շատ յետաքննողների ցուցմունքները, յայտնի է բոլորին: Այնուհետեւ, դատարաններին ման հնազանդութիւն, որն այժմ կայ Հայաստանում, տասը տարի առաջ պատկերացնել անհնար էր: Երբ իշխանութիւններն Ազգային ժողովում ընտրութիւններից առաջ քննեցին ցանկերից մի քանի հարկու թեկնածուները, վերջիններս դիմեցին դատարան: Մէկ-երկու դատական նիստերից յետոյ պարզ դարձաւ, թէ ինչ կը լինի միւս դատաւարութիւններում: Սկսում էր հերթական դատաւարութիւնը, իսկ մենք արդէն գիտէինք դատարանի վճիռը՝ հայցը կը մերժուի: Մերժուեցին բոլոր հայցերը: Համայնաւարները ժողովրդավարութեան երեւում:

Թականութիւնը պահպանելու համար 600 կամ 700 հանուած թեկնածուներից կը վերականգնէին 15-20 մարդու: Նախորդ տարի չվերականգնուեց եւ ոչ մէկը: «Դրօ» եւ «31» գործերով դատաւարութիւններում, ինչպէս նաեւ նախաքննութեան ժամանակ իրաւախախտումներին ման շարք տասը տարի առաջ պատկերացնել անհնարին էր: Տասը տարի առաջ անհնար էր պատկերացնել ընդհանրապէս ոչինչ չանող հանրապետութեան դատախազը: «Դրօ»-ի գործով ամբաստանեալները յայտարարում են, որ նրանց ծեծել են Ա.Ա.Պ.Վ. աշխատակիցները: Դա կ'աժ մը մարմիտ է, կամ՝ սուտ: Գլխաւոր դատախազը լուում է: Եթէ դա ճշմարիտ է, իսկ դատախազը լուում է, նշանակում է, նա իր երկրի քաղաքացիներին չի պաշտպանում բռնութիւնից, իսկ դա նրա պարտականութիւնն է: Եթէ դա սուտ է, իսկ դատախազը լուում է, նշանակում է՝ նա պետական պաշտնաներին չի պաշտպանում չարամիտ յերկրանքից, իսկ դա նրա պարտականութիւնն է: Դատախազի նման լուութիւնը տասը տարի առաջ անհնար էր:

Այսպիսով, Հայաստանում մարդու իրաւունքները եւ բարելաւում, եւ վատթարացած վիճակում են: Ամէն մի իշխանութիւն համակարգի առաւելութիւնները վերագրում է իրեն, իսկ թերութիւնները բացատրում թըշնամիներին: Իրող աւանդներով, կամ «առարկայական» պատճառներով: Ինչպէս ասում է Լիւքսըմբը. «Որոշ ժամանակ կարելի է յիմարացնել մարդկանց, մշտապէս կարելի է յիմարացնել որոշ մարդկանց, բայց յիմարացնել բոլորին եւ մշտապէս՝ անհնար է»: Դա տեղի ունեցաւ այն պատճառով, որ 1988ին մենք բոլորս ասացինք՝ «Բաւական է, մենք այլեւ չենք կարող ապրել անազատ կայսրութիւնում»: Եւ մենք միայն դա չասացինք: 1988ին մենք հոգեպէս ազատ էինք: Իսկ ինչ է տեղի ունենում այժմ: Բանն այն չէ միայն, որ խախտուում են մարդու այս կամ այն իրաւունքները: Բանն այդ խախտումների նկատմամբ ամբողջ հասարակութեան վերաբերմունքն է: Երբ «Դրօ» գործով դատախազը պահնեց չորս մեղադրեալների գնդակահարութիւնը, ես ինձ մէկ հարց տուեցի: Բայց նախ դատախազի պահանջի մասին: «Դրօ» գործում համարեա իւրաքանչիւր դրուագի հարցում կային բազմաթիւ կասածներ: Իսկ միջազգային օրէնսդրութեան եւ Հ.Յ. սահմանադրութեան 41րդ յօդուածի համաձայն, բոլոր կասածները մեկնաբանում են ի շահ մեղադրեալի: Այս առում-

մով դատախազը իրաւունք չունէր մահապատիժ պահանջել: Այսպէս, երբ դատախազն աւարտեց իր խօսքը, ես մտածեցի, թէ ինչ կը պատահէր, եթէ նա պահանջէր անմիջապէս գնդակահարել բոլոր մեղադրեալներին, դատարան մտնէր հրաձիգների դասակը եւ տեղ-նուտեղը բոլորին գնդակահարէր: Ես շատերին տուեցի այս հարցը, եւ բոլորը սարսափով պատասխանեցին: Ոչինչ չէր պատահէ: Հարցադատները կը լացէին, ոչ պաշտօնական մամուլը ջախջախիչ յօդուածներ կը տպէր, 200-300 մարդ կը գնային նախագահական նստավայր: Եւ վերջ: Եւ հէջ սա է սարսափելին մարդու իրաւունքների հարցում մեր երկրում:

Դուք յիշում էք Ֆրանսիական «Նազալիք» ժապաւնէրի այն դրուագը, երբ տնօրէնը հրամայում է իր ենթականերից մէկին՝ ամբողջովին մերկանալ, իսկ վերջինս սկսում է հանել հագուստները: Եւ տնօրէնը հռետորական հարցը. «Ուրեմն ո՞վ է մեզինց հրէշը»: Մենք իշխանութիւններից նեղացած ենք, որ նրանք խաբել են մեր լաւագոյն զգացմունքները: Յուսով էինք, որ տապալելով կրեմլեան խամաճիկներին, կը գան «մեր» տղերքը, եւ կեանքը հրաշալի կը լինի: Ստացուեց սատանան գիտի, թէ ինչ: Սակայն մեր երկրում իշխանութեան եկածները չխաբեցին մեզ, մենք ինքներս մեզ խաբեցինք: Մենք մեր գոլիւն ինք մտցրել, թէ կան հակաժողովրդական եւ կան ժողովրդական իշխանութիւններ: Սակայն աշխարհի բոլոր երկրների բոլոր իշխանութիւնները չեն թելել, չեն եւ չեն լինի «ժողովրդական»:

Պետութեան ղեկին կանգնած մարդիկ կարող են մտածել միայն իրենց գրպանի, պետական մեքենայի եւ իրենց քաղաքական կուսակցութեան կամ, լաւագոյն դէպքում, իրենց երկրորդ շահերի մասին: Բայց նոյնիսկ այդ լաւագոյն դէպքում, երբ պետութեան գոլիւն կանգնած մարդկանց հետաքրքրում են պետութեան կարիքները, նրանք չեն կարող մտածել առանձին քաղաքացիների ճակատագրերի մասին ճիշդ այնպէս, ինչպէս այն գործաւորը, որը եթէ սկսի մտածել ամէն մի գինուորի ճակատագրի մասին, ապա երբեք չի կարողանալ սկսել ճակատամարտ: Օրինակ, Հայաստանին հարկաւոր է կազ, առանց որի կը կործանուի: Ենթադրենք՝ վաղը կազի համաշխարհային գիւնր երկու անգամ թանկանում է: Պետութեան ղեկավարները ստիպուած կը լինեն անելացնել կազի գինը բոլոր քաղաքացիներին համար, թէ՛ եւ որոշ քաղաքացիներին համար դա ողորբ-դուլութիւն կը լինի: Ի հարկէ, եթէ իշխանաւորները հետաքրքրուեն երկրի ճակատագրով,

ապա նրանք ներքին պահուստներ կը գտնեն այս քաղաքացիների ճակատագիրը թեթեւացրելու համար: Մեր երկրում իշխանաւորների մի մասը մտածում է միայն իր զրպանի, միւս մասը՝ պետական մեքենայի եւ իր կուսակցութեան կամ խմբակցութեան շահերի մասին: Այս դէպքում կարելի է անշնայտ ամբողջ Երեւանի երկտրամատակարարումը երեք օրով մտնեցնելու ռիսկը: Եւ տնտեսուած ռիսկերի վաճառքը: Եւ նման բան Նիւսիսիւում կամ Ամաթեր-տամում: Ի հարկէ, ոչ: Եւ ոչ այն պատճառով, որ այդ երկրների պետական գործիչները մտահոգ են միայն երկրի եւ քաղաքացիների շահերով: Աշխարհի բոլոր երկրներում կան «ուսուողներ», բայց զարգացած երկրներում ստեղծուած է այնպիսի հասարակութիւն, որ տեղ պետութեան իշխանութիւնը սահմանափակուած է, իսկ քաղաքացիների իրաւական դրութիւնն ապահովում է իրաւական երաշխիքներով:

Մեզ մօտ, ցաւօք, ամէն ինչ հակառակն է: Պետութեան իշխանութիւնը ոչնչով սահմանափակուած չէ, իսկ քաղաքացիների իրաւական վիճակը ոչնչով երաշխաւորուած չէ: Եւ մեղաւորը ոչ թէ իշխանութիւններին են, այլ հասարակութիւնը: Ոչ մի պետութիւն ինքն իրեն չի սահմանափակի, եւ ոչ մի իշխանութիւն իր քաղաքացիներին իրաւունքներ չի ստիճար: Հասարակութիւնը պէտք է ինքը սահմանափակի պետութեան իշխանութիւնը, իսկ քաղաքացիները պէտք է իրենք նուաճեն իրենց իրաւունքները:

Յիշում էք ինչպէս էր 1988 թուականին: Հարկու հազարաւոր մարդիկ դուրս ելան հրապարակ, եւ առաջին անգամ իշխանութիւնը լսեց ժողովրդին: Չէ՞ որ մինչ այդ լսել անգամ չէին ուզում: Սովետային լիցենզիայի չնայած գործը մտնեցին, երեւանցիները փողոց դուրս եկան եւ ցոյց տուեցին, որ իրենք չեն վախճնում: Եւ Կեմմը համարձակուեց Երեւանում կրկնել 1988 թ. Այմաթիի դէպքերը:

Իսկ այժմ: Նախագահը գերազանցում է իր լիազօրութիւնները եւ կասեցնում Դաշնակցութեան գործունէութիւնը: Բոլորը կարող են սխալուել, նախագահը նոյնպէս կարող է սխալուել, բայց նա նոյնիսկ չբարեհաճեց ներողութիւն խնդրել ժողովրդից: Պարզապէս մէկ օր անց Արդարադատութեան նախարարութիւնը հաստատեց նրա հրամանագիրը, իսկ հասարակութիւնը լուում է: Ի՞նչ է, նախագահ Նիքսոնն անելի լա՞ն է, քան Տէր Պետրոսեանը: Անձամբ ինձ համար նա անելի քիչ է հա-

մակրելի, քան Տէր Պետրոսեանը, բայց Նիքսոնին պաշտօնագրկեցին շատ անելի փոքր յանցանքի համար: Բանն այն չէ, որ պէտք էր անմիջապէս պաշքարել Տ. Պետրոսեանի իմպլիցիտ համար: Սակայն Հ.Յ. նախագահը, ով էլ լինէր՝ Լեւոն Տէր Պետրոսեանը, վազգէն Մանուկեանը, Պարոյր Հայրիկեանը կամ Պօղոս Պողոսեանը, պէտք է գիտենար, որ իր իշխանութիւնը սահմանափակուած է հասարակութեան կողմից:

Եթե ում են յետաքննողներին՝ հասարակութիւնը լուում է, օթիպիւսներում բռնուտում են տղաներին եւ նրանց քաշը տալիս գործաժատ՝ հասարակութիւնը լուում է: Դատաւարութիւններն ընթանում են աղաղակող իրաւախախտումներով՝ հասարակութիւնը լուում է: Իրենց կողորդներն են պատուում 5-6 լրագրողներ, 5-6 փաստաբաններ, 2-3 իրաւապաշտպաններ, իսկ իշխանութիւնները քայլ առ քայլ հասարակութիւնից խլում են նրա իրաւունքները:

Եւ եթէ մենք վաղը արթնանանք պանանային կամ ծիրանային հանրապետութիւնում, ինչպէս մեզ վախեցնում են որոշ ֆիլիթիոլոգներ, ապա հիմնական մեղքը կը լինի ոչ թէ իշխանութիւններին, այլ մերը՝ հասարակութեան ամբողջութեամբ: Ես չգիտեմ, թէ ինչ է պէտք անել, գուցէ հրաւիրել բոլոր քաղաքականին, նոյնպէս կը դառնան գոհեր: Գուցէ հարկաւոր է հրաւիրել հսկայական մի միթինկ՝ նուիրուած միայն մարդու իրաւունքներին: Ես չգիտեմ՝ ինչ անել, բայց Պորիս Չիչիպապինի հետ ցանկանում եմ կրկնել՝ եկէք ինչ-որ բան անենք, այս կերպ ապրելն անհնար է:

ԳԵՈՐԳԻ ԽՈՄԻԶՈՒՐԻ

ՄԻԶԱԳԱՅԻՆ ԿԱՐՄԻ ԽԱՂԷ ԿԷ ՀԱՍՏԱՆԷ ԱԶՐՊԵՅԱՆ ԿԷ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՊԱՏԱՆԴ ՊԱՅԵԼ 7 ՅԱՅԵՐ

Չորեքշաբթի օր Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան իշխանութիւնները յայտարարեցին, թէ Ազրպէյճան սակաւշին կը պահէ 7 խաչ պատուակներ (նիւստիւ)՝ կիներ եւ երեխաներ:

ու այս փաստը հաստատուած է Միջազգային Կարմիր Խաչին կողմէ:

Լ. Ղ. Հ. ու ռազմագիւրիներու, պատակներու եւ անկախ կողորդումներու Պետական Յանձնաժողովը պաշտօնապէս յայտարարեց, թէ իր տրուակներով. «Ներկայումս Ազրպէյճանի Կողորդական ատումով՝ որտեղ անդակաւորուած է ռազմագիւրիները եւ պատակները պահպանում են ռազմագիւրիները: Ստեփանակերտում՝ Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտէի առաջնորդի կողմից հաստատուած առեւտրային փոխադրութիւնն է, որ Ազրպէյճանը պետական մակարդակով շարունակում է զարադարեան հակամարտութեան ինտոյ մի առնչութիւն չունեցող հալածողական ակումները: Բոլոր այն մարդիկ, արմատաւորեւ իրաւունքներ են Ա.Պ.Հ. երկրների տարածքներում՝ 1996 Մայիս 9-ից յետոյ, բանի որ այդ օրն Ազրպէյճանը, Լեւոնային Ղարաբաղի եւ Հայաստանի յայտարարել են իրենց մօտ անուղղակի ռազմագիւրիների՝ «բոլորը՝ բոլորի դիմաց» սկզբունքով փոխադարձաբար ազատագրելու մասին, որն իրականացնելու է Ռուսիայի միջնորդութեամբ: Նոյն օրն իսկ հակամարտ կողմերը պարտաւորութիւն էին ստանձնել անյապաղ ազատել բոլոր պատակներին, երբ այդպիսի լինին ինտագրալներ:

Միջազգային Կարմիր Խաչի հսկողութեան տակ տնկուած են, Կողորդական մէջ՝ կիներ, 17 տարեկան աղջիկ մը, 15ամեայ պատակներ, որոնց հետ կիներու հոգի եւ մի կողմից իրաւունքներ, որոնք չեն սպառնալ հակամարտութեան գօտիները: Այս ուղղութեամբ, Պետական Յանձնաժողովը յայտարարեց, որ «չառախալով վրդովմունքներով ու խախտելով իրաւունքները, որն իրականացնելու է Ռուսիայի միջնորդութեամբ: Նոյն օրն իսկ հակամարտ կողմերը պարտաւորութիւն էին ստանձնել անյապաղ ազատել բոլոր պատակներին, երբ այդպիսի լինին ինտագրալներ:

Յանձնաժողովը Ազրպէյճանի ղեկավարութեան կողմից, որպէսզի անշնայտ գործադրել նախապէս ձեռք բերուած համաձայնութիւնը եւ ապա արձակել իր պետութեան բոլոր պատակները: Յանձնաժողովը նաեւ յայտարարեց, որ համաշխարհային հանրութիւնը, շահագրգիռ միջազգային կազմակերպութիւնները առաւելագոյն չափով կ'աջակցեն Ազրպէյճանի մէջ պահուող պատակներու ազատ արձակման:

...ԻՍԿ ՀԻՄԱՆ ԳԼԴԻԹԻ ՊԵՅՐՈՒԹ



Մարզական



Մարզական



ԵՒՐՈՊԱՅԻ ՖՈՒԹԴՈՒԼԻ ԵՐԵՔ ԲԱԺԱԿՆԵՐ

Ա. ՍԷ. ՄԻԼԱՆ ԵՒ ԱՅԱՔՍ ԲԱԽՏԱՒՈՐ ԴՈՒՐՍ ԵԿԱՆ

Ժընևի մէջ տեղի ունեցած, Եւրոպայի ֆուտբոլի երեք բաժաններու մրցումներուն վիճակաձգութիւնները բախտաբեր եղան Ա. ՍԷ. Միլանին եւ Այաքս Ամսթերտամին համար, որոնք ակոյեան խումբերու բաժանի մրցումներուն կրցան տարբեր խմբակներու մէջ իջնայ, մինչդեռ Մանչեսթըր Եունայթեդը եւ տիտղոսակիր Եուվերթուս միեւնոյն խմբակին մաս կը կապմեն:

Եու.Է.Է.Ֆ.Ա.ի մրցումներին ալ բալլմարի եւ իրենց հաւասարակշռուած ձակարկներով:

Մրցումներուն յայտագիրն է.

ԵՈՒ.Է.Է.Ֆ.Ա.Ի ԲԱԺԱԿ

ԵՐԹ ՍԵՊՏԵՄԵՐ 10, ԳԱՐՉ ՍԵՊՏԵՄԵՐ 24

Պրոնտուպի (Դանիա) - Ապսոն (Զուից.)
Մոսկուայի Բանուկ. (Ռուսիա) -
Ֆէյնուրտ Ռոթերտամ (Հոլանտա)
Ախիլ Նիկոսիա (Կիպրոս) - Էսթրալսի (Սլովակիա)
Կեմպան (Ֆրանսա) - Բնթեր Միլան (Իտալիա)
Օսէնս (Դանիա) - Պոսիսթա (Փորթ.)
Ֆերենթարոշ (Հունգ.) - Օլիմպիսթոս (Յուն.)
Նիւքեմլ Եուն. (Անգլիա) - Լապիւնտ (Շուէտ)
Ապըրտին (Սլովակիա) - Պերի Թաուն (Կալէս)
Հուրթիք Բարսել (Լեհ.) - Մոնաքո (Ֆրանսա)
Ռոմա (Իտալիա) - Տին. Մոսկու (Ռուսիա)
Սելթիք Կլաքս (Սլովակիա) - Համպսթր (Գերմ.)
Թեմերիֆէ (Սլովակիա) -
Մաքսուպի Թէլ (Աւստր.)
Փանաթինայքոս (Յուն.) -
Լեկիս Վարշաւա (Լեհ.)
Արսենալ (Անգլիա) -
Պորուսիա Մոնչենգլադախ (Գերմ.)
Չեռնոմորեց (Ուկրաինա) -
Նապոլի Պուրթ (Ռուս.)
Թորինեո Մոսկու (Ռուսիա) -
Տինամո Թիֆլիս (Վրաստան)
Ֆ. Բ. Պրիւժ (Պելժ.) - Լինկա (Դանիա)
Ռախտ Պուրթ (Ռուս.) - Բալլսթրադ (Գերմ.)
Ասթոն Վիլա (Անգլիա) - Հելսինկյուրկ (Շուէտ)
Լանս (Ֆրանսա) - Լաքսի Ռոմա (Իտալիա)
Սպարտակ Մոսկու (Ռուսիա) -
Սիւրսկայի (Բելառուս)



...Զինեմի Զիտանի Եուվերթուսին դէմ

Մալմո (Շուէտ) - Սլաւս Փրակա (Չեխիա)
Էքերէն (Պելժ.) - Բալլինո Կրոս (Աւստրիա)
Մոնպելիէ (Ֆր.) - Սիւրսկայի (Լիւքսեմբ.)
Վալենսիա (Սլովակիա) - Պալերմ (Գերմ.)
Տին. Բիւ (Ուկրաինա) - Նեօշտրալ (Զուից.)
Մոլդենպէ (Պելժ.) - Պեշխիքաշ (Թուրքիա)
Կիւսարսէ (Փորթ.) - Փարսա (Իտալիա)
Ալանիս Վրաստան (Ռուսիա) -
Անտուրպի (Պելժ.)
Շալթ 04 (Գերմ.) - Ռոտտ (Հոլանտա)
Թիւրո Բանպուք (Աւստրիա) - Մէն (Ֆրանսա)

ԲԱԺԱԿԱԿԻՐ ԽՈՒՄԲԵՐՈՒ ԲԱԺԱԿ

ԵՐԹ ՍԵՊՏԵՄԵՐ 12, ԳԱՐՉ ՍԵՊՏԵՄԵՐ 26

Նիւ (Ֆրանսա) - Բիւլիէշ Լոնդոն (Հունգ.)
Շթուրմ Կրոս (Աւստրիա) -
Ախաթա Փրակա (Չեխիա)
Ըոնթրոլքորուկ (Մոլդովիա) -
Կալաթարսարու (Թուրքիա)
Բալլսթրալուքերն (Գերմ.) -
«Կարմիր Աստղ» Պելլիստ (Եսկ.)
Մալիս (Անիպոլսի) (Ֆինլ.) -
Լիւքսմուկ (Անգլիա)
Սիոն (Զուից.) - Նիլա (Ուկրաինա)
Արհուս (Դանիա) -
Օլիմպիկ ինտերնացիոնալ (Սլովենիա)
Սերբի Պրիւժ (Պելժ.) - Պրան Պերկըն (Նորվ.)
Լոք. Մոսկու (Ռուսիա) - Վարթէքս (Խորվաթիա)
Ռեյնիսլիք (Իսլանտա) - Սոլնա (Շուէտ)
Պարսելոնա (Սլովակիա) -
Ա.Է.Բ. Լաւնաքս (Կիպրոս)
Պեմֆիքա (Փորթ.) - Ռուշ Զորուկ (Լեհ.)
Ա. Է. Բ. Աթէնք (Յուն.) - Շեմլոն (Սլովակիա)
Կորիս (Ռուս.) - Ֆիորենտինա (Իտալիա)
Տինամո Պարսել (Վրաստան) -
Փ. Ս. Վ. Անտոնովն (Հոլանտա)
Վատուս (Լիխթենշտայն) -

Փարիզ Ս. Ժ. (Ֆրանսա)
ԱԽՈՅԵԱՆ ԽՈՒՄԲԵՐՈՒ ԲԱԺԱԿ
11 ՍԵՊՏԵՄԵՐ

Ա. խմբակ. - Օսէր - Այաքս
Կրէսնո - Կլաքս
Ռեյնիսլիք - Բ. խմբակ. - Աթլ. Մաուրիս - Սթէնա Պուրթ
Ս. խմբակ. - Սալիս - Սոյրսթուս - Ուիթէլ Լոն
Պ. խմբակ. - Ռախտ - Վիեննա - Ֆերենթա
Շ. խմբակ. - Եուվերթուս - Մանչ. Եուն.
Պ. խմբակ. - Կորնալի - Ռուլնալի
Ա. ՍԷ. Միլան - Փորթ



Լիւքս Բանթոնայի Մանչեսթըր Եունայթեդը պիտի մրցի...

25 ՍԵՊՏԵՄԵՐ

Ա. խմբակ. - Ռեյնիսլիք - Օսէր
Այաքս - Կրէսնոլիք
Բ. խմբակ. - Ուիթէլ Լոն - Աթլ. Մաուրիս
Սթէնա Պուրթ - Սոյրսթուս
Պ. խմբակ. - Մանչ. Եուն. - Ռախտ - Վիեննա
Պ. խմբակ. - Ֆերենթա - Մանչ. Եուն.
Ռախտ - Վիեննա - Եուվերթուս
Պ. խմբակ. - Ռուլնալի - Փորթ
Կորնալի - Ա. ՍԷ. Միլան

30 ՆՈՅԵՄԵՐ

Ա. խմբակ. - Ռեյնիսլիք - Այաքս
Կրէսնոլիք - Օսէր
Բ. խմբակ. - Ուիթէլ Լոն - Սթէնա
Սոյրսթուս - Աթլ. Մաուրիս
Պ. խմբակ. - Մանչ. Եուն. - Ֆերենթա
Եուվերթուս - Ռախտ
Պ. խմբակ. - Փորթ - Ռուլնալի
Ա. ՍԷ. Միլան - Կորնալի

20 ԴԵՍԵՄԵՐ

Ա. խմբակ. - Այաքս - Օսէր
Ռեյնիսլիք - Կրէսնոլիք
Բ. խմբակ. - Սթէնա - Աթլ. Մաուրիս
Ուիթէլ Լոն - Սոյրսթուս
Պ. խմբակ. - Ֆերենթա - Ռախտ
Մանչ. Եուն. - Եուվ.
Պ. խմբակ. - Ռուլնալի - Կորնալի
Փորթ - Ա. ՍԷ. Միլան

4 ԴԵԿՏԵՄԵՐ

Ա. խմբակ. - Օսէր - Ռեյնիսլիք
Կրէսնոլիք - Այաքս
Բ. խմբակ. - Աթլ. Մաուրիս - Ուիթէլ Լոն
Սոյրսթուս - Սթէնա
Պ. խմբակ. - Ռախտ - Վիեննա - Մանչ. Եուն.
Եուվերթուս - Ֆերենթա
Պ. խմբակ. - Կորնալի - Փորթ
Ա. ՍԷ. Միլան - Ռուլնալի

ԿԼԵՆ ՀԱՏԵԼ ՍԿՍԱԻ ԸՆՏՐԵԼ ԱՆԳԼԻՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԻՆ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ

Անգլիոյ ախոյեանու- թեան մրցումներուն սկըսումով, գործի յոռեցաւ նաեւ Անգլիոյ ազգային խումբին նոր մարզիչը՝ Կլէն Հատըլ եւ սկսաւ կըրտել իր նոր կազմը:

Մինչեւ այս ամուսնու- աւարտը, Հատըլ պէտք է հաւաքած ըլլայ իր մարզիկները, որովհետեւ յառաջիկայ Կիւրակի օր, 1 Սեպտեմբերին, Անգլիոյ ազգային խումբը պիտի կատարէ 1998ի Մոնտիալի գտումի իր առաջին մրցումը՝ Մոլտաւիոյ դէմ:

Նշենք, թէ Բ. խմբակէն Անգլիա իրեն մրցակիցներ պիտի ունենայ նաեւ Իտալիան, Լեհաստանը եւ Վրաստանը:

Հատըլ առաջին հերթին իր կազմէն ներս առաւ Մանչեսթըր Եունայթեդի միջնապահ Տէյվիտ Պեքհա-

(Լիվըր- փուլ), իսկ Ֆիլ Նելսոն (Մանչեսթըր Եունայթեդ) եւ Տէյվիտ Ռեյնս (Լիվըրփուլ) վիրաւորը յաջողաբար հաւանա- նան իրենց խաղընկեր- ներուն հետ Մոլտաւիա այցելել:

Հաւանա- նական է, որ մինչեւ շաբաթակերպ, Հատըլ ամիրողացնէ իր կազմը եւ յայտարարէ իր 22 մարզիկներուն անունները:



Տէյվիտ Պեքի եւ...



Տէյվիտ Ռեյնսաի Կիւրակի, իսկ...

մը եւ Ստոկհոլմի մարզիչը մա- Կաքոն Մէթիւս Լը Թի- սիլն:

Արսենալի մարզիկներէն Տէյվիտ Փիլթ եւ Թոնի Էտմոնդ վիրաւոր են, հետեւաբար, անոնց պաշտօնը պիտի ստանձնեն Նիւքեմլի միջնապահ Տէյվիտ Պեթին եւ Մանչեսթըր Եունայթեդի յետապահ Կլէրի Փարիսթըրը:

Պէքպարնի բերդապահ Թիւ Ֆլուրիսի եւ Թոնիսհա- թիւ Ֆլուրիսի իր տեղը պիտի գրի Տէյվիտ Տէյվիտ

Լը, իսկ իր կազմը եւ միացաւ ազգային խումբին մարզիչներուն խմբակին:

48 տարեկան Քլեմենս, որ նախապէս մաս կազմած էր Լիվըրփուլի եւ Թոնիսհա- թիւ Ֆլուրիսի իր տեղը պիտի գրի Տէյվիտ Տէյվիտ



... Մէթիւս Լը Թիսիլ մաս պիտի կազմէ Անգլիոյ ազգային խումբին

գրիլն էր: Ան, 1972-ին 1983-ին 61 ան- գամ կրած է ազգային խումբին շապիկը:

ԱՆՑԵԱԼ ԵՂԱՆԱԿԻ ՀԱՇԻՒՆԵՐԸ ՊԻՏԻ ՓԱԿՈՒՆ ԱՅՍ ԵՂԱՆԱԿԻՆ

Անգլիոյ ֆուտբոլի ֆետերասիոնը անցեալ շաբաթ յայտարարեց, թէ Գ. դասակարգի Պրայմին ակումբին պատասխանատուները, անցեալ Ապրիլին տեղի ունեցած մրցումի մը ընթացքին չեն կրցած իրենց համակիրները գտնել, հետեւաբար, կը նկատուին գլխաւոր յանցաւորը:

Եւրոպի դէմ մրցումը 16րդ վայրկեանին ընդհատուած էր, երբ դաշտին տէրիւնը՝ Պրայմին համակիրները դաշտ խուժած էին եւ երկու բերդերը տեղահան րած էին, յայտնապէս բողոքելու համար իրենց պատասխանատուներուն ալ որոշումին դէմ, որուն համաձայն, Փորթսմութ իրենց «Կոլտսթըն» դաշտին բաժնեկից պիտի դառնար եւ իր մրցումները հոն պիտի կատարէր:

Ֆետերասիոնի մէկ պատասխանատուն յայտնեց, թէ հակառակ անոր որ դէպքը տեղի ունեցած էր անցեալ եղանակին, իրենց կողմէ սահմանուած այդ պատիժը այս եղանակին պիտի գործադրուէ:

Պրայմին է պիտի խլուի 3 կէտ (ախոյեանութեան մրցումներու գծով) եւ իր դաշտին վրայ կատարելիք մրցումներէն մէկը պիտի կատարէ ստար դաշտի վրայ եւ... դռնփակ:

Ֆետերասիոնի այդ պատասխանատուն վերջին անգամ ըլլալով գգուչացող Պրայմին պատասխանատուները, որպէսզի ամենախիստ միջոցներ ձեռք

առնեն, յառաջիկային գտնելու համար իրենց համակիրները, որովհետեւ իրենց դաշտին կամ ստար դաշտերու վրայ որեւէ անհաճոյ միջոց կ'օգտագործուի, շատ աւելի ծանր պատիժներ պիտի ստանան:

● ԻՏԱԼԻՈՅ ֆուտբոլի ֆետերասիոնը եւս յիշեցուց բոլորին (վստահաբար իտալացիներուն), թէ անցեալ եղանակին տեղի ունեցած անկարգապահները եւ խորդ- րայրոյց անձերը վստահաբար անպատիժ չեն կրնար մնալ:

Փիլաշենցայի 15 համակիրները այս եղանակին պիտի չկարենան իրենց կազմին կատարելիք մրցումներուն ընթացքին դաշտ մտնել, այդ մրցումները ըլլան իրենց դաշտին կամ ստար դաշտերու վրայ:

15 անձերը, որոնց տարիքը կը տարու- րերի 18-ի եւ 34-ի միջեւ, անցեալ եղանակին Ա. ՍԷ. Միլանի դէմ մրցումին, «Կալեա- նա»-յի դաշտին մէջ բախումներու պատ- ճառ դարձած էին:

Ոստիկանութիւնը յայտնեց, որ անոնց պատիժը պիտի երկարի 45 օրէն մինչեւ մէկ տարի:

Շատերու համար հարցական կրնայ թուիլ, թէ ֆետերասիոնը ինչպէ՞ս փաստեց անոնց ինքնութիւնը:

Գաղտնի ոստիկաններ եւ դաշտերուն մէջ թէ դուրս գտնուող գաղտնիկարչա- կան գործիքները փաստած էին այդ ան- ձերուն ինքնութիւնը, հետեւաբար...

ՀԱՅՈՒՆ ՌԻՇԷ ԻՐ ՔՈՒՆԻՆ ՄԵՋ Է



ՀՈՒՄԱԽԸՐ ՅԱՂԹԵՅ ԱՆԱԿՆԿԱԼՕՐԷՆ

6.30ր լուրերէն ետք:
Այսօր կը խօսին
1.- Գրիգոր Հանիմանուկեան
2.- Սեդա Խաչեան

...ԻՍԿ ՆԻՄԱ ԴԵՊԻ ՊԵՅՐՈՒԹ

ՀԱՄԱԽՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՍՆԵԼՈՒ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ...

«ին այնպիսի ցանկի մը շուրջ, որուն մէջ ընդգրկուին փաղանգաւորներու թեկնածուներէն Քարիմ Բագրաստունին եւ Անթուան Շատէրը»:

Հայկական նոյն աղբիւրը կ'աւելցնէ, որ սպասելով ներհայկական խորհրդակցութիւններու արդիւնքներուն եւ վարչապետ Հարիրի կեցուածքի յստակացումին՝ ցարդ վերջնական որոշում մը չէր տրուած:

ՀԱՐՅԵՐԸ ԿԸ ՄՆԱՆ ԶՎՃՈՒԱՇ

Իսկ եթէ՝ ի յայտ գայ, որ վարչապետ Հարիրի ընտրական ցանկ մը պիտի չկազմէ: Նոյն աղբիւրը կը պատասխանէ, որ հայկական ուղղուածութիւնը պիտի ըլլայ Սելիմ Հըսի ցանկին միանալը, մանաւանդ որ այն ժամանակաշրջանին, երբ կարապիսի մթնոլորտ, թէ վարչապետ Հարիրի թեկնածու պիտի չներկայանայ, Սելիմ Հըսի հետ համաձայնութիւն մը գրեթէ գոյացած էր:

Նոյն աղբիւրը կը հաստատէ, որ ամէն պարագայի ալ 1992ի ընտրութիւններու պատկերը պիտի չկրկնուի, եւ հայ թեկնածուները առանց քուէարկուելու պիտի չընտրուին, որովհետեւ արդէն իսկ Բագրատունի, Շատէրը եւ այլ անկախ անձնաւորութիւն մը ներկայացուցած են իրենց թեկնածութիւնը:

Ինչ կը վերաբերի նախարար Շահէ Պարսումեանի ճակատագրին, միեւնոյն աղբիւրը կը յայտնէ, որ անոր ճակատագիրը նոյնն է, ինչ որ մնացեալ թեկնածուներուն ճակատագիրը: Շատ հաւանական կը նկատուի, որ Դաշնակցութիւնը իր ցանկին մէջ ընդգրկէ ռաժկավարներուն ուղեկից Հայկական Բարեօրծական Ընդհանուր Միութեան մէկ ներկայացուցիչ, ինչը կ'աւելցնէ նախարար Տէմիրճեանի կամ իր եղբոր՝ Սարգիս Տէմիրճեանի ընդգրկումին հաւանականութիւնը:

Իրեւ վերջարան կարելի է ըսել, որ հարցերը ցարդ չեն վճռուած, եւ բոլոր տեսակի հաւանականութիւնները աւելայ են՝ քաջ գիտնալով, որ Դաշնակցութիւնը Պէյրութի իր թեկնածուներուն ցանկը կը կազմէ համակիրներէ եւ ոչ թէ կուսակցականներէ: Դաշնակցութիւնը վստահ եւ հաստատուն քայլերով կ'ընթանայ դէպի յառաջիկայ ընտրութիւնները:

ՎԵՐԱԾՆՈՂ ՄԵՔՍԻՔԱՆ...

րապետուած է մեքսիկոներով, այսինքն՝ սպանական եւ հնդկական արեան խառնուրդ ժողովուրդով:

Հետեւաբար մեքսիքացիներուն մեծամասնութեան համար այս հողին հետ ամէնէն խոր կապերը հաստատուած են ոչ թէ անոր ափերը հասած հայրենակարօտ եւրոպացիներու ժամանումին օրով, այլ՝ շատ աւելի առաջ հետիոտն հոն հասած մարգոյ օրով, զորս առապելները նոյնիսկ մոռցած են: Այս մեքսիքացիներուն արեան մէջ կը հոսին օյմէքներու, մալաներու եւ ալթէքներու քաղաքակրթութիւնները, ինչպէս նաեւ՝ սպանացիներու սովատանց կարիքները:

Այս բոլորէն լառաջացած է հարուստ մշակոյթ մը: Հռոմէական կարողիկէ եկեղեցին կը գերիշխէ ոգեղէն կեանքին վրայ: Սակայն Մեքսիքայի մէջ ծեփեր այնքան թաթաւուած են բնիկներու աւանդութիւններուն մէջ, որ գերթ կատելի է լսել ալթէքներու պատերազմական երգի մը ողբը գիւղական եկեղեցիներու ծուխոտ շուքերուն մէջ: Իսկ առօրեայ կեանքը ինքնին հակասութիւններու փառաբանումն է: Մեքսիկացիներու փառաբանութեան մեքսիքացի մրցանակակիր Օքթաւիօ Փալ նկատած է, թէ՛ «մեքսիքացիք հաճոյք կը զգան վարդարանքով, անհոգութեամբ, պերճանքով, անխորթութեամբ, կիրքով եւ վերապահութեամբ»: Կեանքը խոր եւ կատաղի է, իսկ մեքսիքացիին իր երկրին փառաշուք բնութեան եւ իր արեան մէջ եւազող արմատներուն պայքարին իբրեւ արդիւնք լեցուած է մեծ զգացումներով:

Եւ ասիկա ակներեւ է ամէնօրեայ կեանքի մէջ, գործի եւ բարեխաղութան ծիրէն ներս: Կեանքը տեւաբար կը գառնայ անհատական կապերու շուրջ: Չեղձուիլը այնքան վարատը համաձայնութիւն մը կրնայ նշանակել, որքան՝ արեամբ ստորագրութիւն մը: Իսկ միասնաբար գործի մը ձեռնարկելը միայն փաստաբաններ եւ գրասենականներ ունենալ չի նշանակեր, այլեւ՝ ընտանեկան պտուղներ եւ ողջագոյններ:

Մշակոյթի, ընտանիքի եւ անմոռանալի վայրերու համագործակցող մեքսիքացիները կը խարսխէ իրենց հողին եւ տուն կը հրաւիրէ թափառականները: Դեպի Միացեալ Նահանգներ ապօրինի կերպով գաղթած մեքսիքացիներ լրացաւ տոնական օրերու առիթով քայլելով կամ պատմ կը կտրեն սահմանափակ անապատը, ապա դարձեալ կը կատարեն վտանգաւոր վերադարձ մը դէպի հիւսիս: Երբ մեքսիքացի գաղթականը կը զգայ, թէ իր դէմքին ժպիտը բռնապստիկ է, կը զգայ, թէ տուն վերադառնալու պահը հասած է: Հոն երեխաներու աղմուկը, ռանչերա երաժշտութեան ձայնը, ուժեղ համեմունքով ձաշերը եւ լերան գագաթին մայր մտնող արեւը՝ սական ուրախութիւն կը պատճառեն:

ՀՈՅՍ ՏԵՍԱԻ ՀՈՅՍ ՏԵՍԱԻ

ԴՐՈՇԱԿ

ՊԱՇՏՆԱԹԵՐՔ
ՀԱՅ ՅԵՂԱԾՈՒՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

27(Դ) (60(Դ)) ՏԱՐԻ, ԹԻՒ 14 (1486), 11-24 ՅՈՒԼԻՍ 1996

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

■ ՆՈՐ ՀԱՐԳՐՈՒՄ, ՎԵՐԱՆՈՐԳ ՈՒՂԻ 2

Շ.Յ.Դ. ՇԱՅԱՍԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ԺՈՂՈՎԻ ՇԵՔԵՐՈՎ

- Հ.Յ. Դ. ՀԱՅԱՍԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ԺՈՂՈՎԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ 3
- ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ 4
- ՉԵԿՈՒՅՈՒՄ Հ.Յ. Դ. ՀԱՅԱՍԱՆԻ ՊԱՏԱՌԱՆԱՍԻ ՄԱՐՄԻ 6
- ՈՂՈՅՆԻ ԵԼՈՅՆԵՐ Հ.Յ. Դ. ՀԱՅԱՍԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ԺՈՂՈՎԻՆ 11
- Հ.Յ. Դ. Ն. ՊԱՏԱՐԱՍ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅԵԼ ԲՈՒՐՈՒ ՀԵՏ 13
- «ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆԸ ԾՇԴՈՒՄ Է ՅԱՌԱՋԻԿԱՅ ԸՆԴԵԼԻՔԵՐԸ» 15
- «ԻՍԿԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՅԱԿԱՆ ՄԾՆԱԼՈՐՏ ԷՐ ՏԻՐՈՒՄ» 16

ՆԵՐԱԶՊԱՅԻՆ ՇԱՅԱՅԸ

- ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ Հ.Յ. Դ. ԲԱԿԱՆՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ՀՐԱՄԱՅԿԱՆ Սերժ Ա. 18
- ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԶԵԿԱՆՈՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆՀԱՐԾԵՏՈՒԹԻՒՆԸ Ս. Յովհաննիսեան 20
- ՀՈԳԵՒՈՐ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀՐԱՄԱՅԿԱՆԸ L. Մկրտչեան 23

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՇԱՍԱՐ

- ՀԱՅԱՍԱՆԻ ԸՈՒՋԻՆ ՀԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴՐԱՄԱՆԻՇԻ ՍՏԵԼԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՅ Մարտ Անտիսեան 28

ՄԻՋԱԶՊԱՅԻՆ ՇԱՅԱՅԸ

- ՄԵՆԵՐ ԵՒ ՌՈՒՄԱՍՏԱՆԸ L. Շիրինեան 30
- ՌՈՒՄԱՆԻ ԴԱՍԵՐ Արամ Մայիլեան 31
- ՌՈՒՄԱՆԻՈՒՄ ԿԱՅԱՅԸ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ 33
- ՆՈՐ ԱՌԻՓ ՄԸ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԶԱՅԻՆ Խ. Տեր-Ղուկասեան 37

■ ԹՈՒՐԻՔԻՈՅ ՇՈՒՐՋ 40



AIR & SEA FREIGHT
PACKING — TRAVEL — INSURANCE

UNITED SERVICES
INTERNATIONAL S.A.R.L.

NACCACHE STREET — CHARTOUNI BLOC
TEL 350550/11/2/3 — 341150/51 — 342800
P.O. BOX 11 4335 — BEIRUT — LEBANON
CABLE: LOSHSERV — TELEX: 20949 LE

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ
ԳՈՅԵՐՈՒ
ԱՊԱՀՈՎԱԳՐԵԱԼ
ԾՐԱՐՈՒՄ ԵՒ
ՓՈԽԱՐՈՒԹԻՒՆ,
ԴԵՊՈ ԱՇԽԱՆԻ
ԲՈԼՈՐ ԿՈՂՄԵՐԸ,
ԻՆՉՊԷՍ ՆԱԵՒ
ՕՐԱՆԱՌԱՅԻՆ
ՏՈՍՍԵՐ

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

● Գրիգոր Շահինեանի մահուան առթիւ Սրբոյ Քառասնից Մանկանց եկեղեցւոյ եղած են նուիրատուութիւններ փոխան ծաղկեպսակի հետեւեալներէն.

Տէր եւ տիկին Պետրոս Ռաքապէլեան 10.000 լ.ու., տէր եւ տիկին Սարգիս Փերդուտեան 10.000 լ.ու., տիկին Ալիս Գալայեան եւ զաւակուք 10.000 լ.ու., Վաղգեմ եւ Հերմին Շահինեաններ 10.000 լ.ու., «Ժամբիլէ» Մուրաշլուք Լուկան 50.000 լ.ու., տէր եւ տիկին Սարգիս Մուշեան 20.000 լ.ու., տղար Վաչէ Զեքմէյեան 25.000 լ.ու., տէր եւ տիկին Յարութ Գրիգորեան 20 ամ. տղար, տէր եւ տիկին Սարգիս Միմասեան 10 ամ. տղար, տէր եւ տիկին Անգրապէլ Ալլընեան 500 սուրիական բլրոսկի:

● Նապարէթ Քոյլեանի մահուան առթիւ Սրբոյ Քառասնից Մանկանց եկեղեցւոյ եղած են նուիրատուութիւններ փոխան ծաղկեպսակի հետեւեալներէն.

Շաֆիք Թոքո 20.000 լ.ու., Ամմար Ժեպէր 20.000 լ.ու., Լուրֆի Ժոքի 10.000 լ.ու., տէր եւ տիկին Ռաֆիկ Տեմիրճեան 10.000 լ.ու., տէր եւ տիկին Յովհաննէ Տեմիրճեան 10.000 լ.ու., Պապեան ընտանիք 10.000 լ.ու., Ժորժ Պուլոս 20.000 լ.ու., Հալիլի Ելիա 10.000 լ.ու., Ֆուադ Սալիմ եւ ընտանիք 10 ամ. տղար, Պոլոսեան ընտանիք 20 ամ. տղար, Ժան Սաուքը եւ ընտանիք 10 ամ. տղար, Ռոմէ Մքարգէլ 10 ամ. տղար:

Կ՝ՈՒԶՈՒՅՆ

● MARC M. Հաստատուիմը կարիք ունի փորձառու կարուհիներու: Զալքա, հեռ. 413909:

Կ՝ՈՒԶՈՒՅ

● «ՆՈԱԶ ԱՐՔ» ցուցասրահը պէտք ունի քարտուղարութիւն մը. օտար լեզու գիտնալը պայման: Հեռ. 445873 եւ (03) 727211:

Կ՝ՈՒԶՈՒՅ

● Արեւմտեան Եւրոպա հաստատուած հայ ընտանք մը պէտք ունի 40Էճ 50 տարեկան խոհարարութիւն մը, որ պատրաստակամութիւն ունենայ մանկ կարգ մը տնային գործեր ալ կատարելու: Աշխատանքի լաւ պայմաններ: Դիմել՝ Ծիմիշեան Կեդրոն, գործի գրասենակ: Հեռ. 261008 եւ 499749:

ԾԱԽՈՒ ՏՈՒՆ

● Ֆարայայի մէջ, գետնայրկ, պարտէզով միասին: Հեռ. 885789:

ՎԱՐԶՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

● Պոլոն Համուտի մամակատան մօտ, Բ. յարկ, յարմարութեամբ՝ բնակարանի, դարմանատան եւ գրասենակի: Հեռ. 328694:

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազգակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գրով (հաստատութեանց պարագային մաքսով) փոխադրելու համար քույրի վրայ, եւ հաստատուած՝ ներկայացնել «Ազգակ»ի ծանուցումներու գրասենակը:


ՇԻՐԱԿ

ՏՊԱՐԱՆ - ԴՐԱՍԱՐԱԿԱՍՈՒՆ

Ամէն որակի քարթերու ճիշդ հաւաքածոյ:

Մաքուր տպագրութիւն:

Անտրուած գինը:



Centre Harbayon, Bloc C, Bouj Hammoud
Telefax: 449533, Cell: 03-708035

ՀԻՄՆԱԴԱՆՈՅ ՄՈՒՏԵՐ ՆԻՐԱԿԱՆ ՄՍԱՀՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԶԵՐԱԶԱՏԵԼՈՒ ՀԱՍԱՐԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՏՏԻԼԻ մօք

- ՆՈՒԱԶԱԳՈՅՆ սակերով
- ԱՌԱՌԵԼԱԳՈՅՆ խնամք
- Վճարման դիւրութիւններ

Հասցէ՝ Ազգային Խորհրդի շէնք, ԱՏՏԻԼԻ կից, Հեռ. 263324

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

☆ **ԽՈՅ** (21 Մարտէն 20 Ապրիլ)

Ոչ մէկ բանէ վախ ունի՜ ու պիտի կարենա՜յ դիմագրանել ներկայացող բոլոր հարցերը: Արձակուրդի օրերը վերջ գաած են, հետեւաբար սկսեցէ՛լ լուրջ աշխատանքի:

☆ **ՅՈՒԼ** (21 Ապրիլէն 21 Մայիս)

Անտես մի՛ բողբոջ լաւ պատեհութիւն մը, որ կրնայ ձեզի օգուտ բերել Հոկտեմբեր ամսուն: Ամէն պարագայի, եղէ՛ք հետաւան եւ արբուն:

☆ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսէն 21 Յունիս)

Առօրեան կը ննչէ ձեր վրայ. մէկ մասնով մ'ունի՛ք այսօր պոռք գալու համար օրուան ձանձրոյթին: Պիտի գտնէ՛ք ստիք մը՝ գուարնալու:

☆ **ԽԵՑԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս)

Օրը սխմեցի՛ւ մասնաւորաբար առանձին ապրող անձերու համար: Նրէ պոռք ելլէ՛ք, պիտի հաճի՛յալի՛ք շատ հաճելի անձի մը, եւ ձեր օրը պիտի գեղեցկանայ:

☆ **ԱՌԻԾ** (24 Յուլիսէն 23 Օգոստոս)

Բախար պիտի մպտի ձեզի ու հաւանական է, որ դրամ շահի՛ք բախտով, մասնաւոր երէ փոքր լանդգրաններ կատարէ՛ք: Օրը շտապի՛ք է:

☆ **ԿՈՅ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)

Ձեր աշխատանքին ու ձեր կեանքին ձեռք մէջ մեծ փոփոխութիւններ կատարելու պատրաստ է՛ք այսօր: Եղէ՛ք խիղիւս ու հաւատ՝ ունեցէ՛ք ձեր գործին:

☆ **ԿԵՒՈՒՔ** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)

Ձեր բախար փորձեցէ՛ք այսօր ձեռով մը՝ րիքի բախտախաղով կամ վիճակահանութեամբ, որովհետեւ օրը բախտաւոր է ու հաւանաբար բուն մը շահի՛ք:

☆ **ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)

Այսօր գաղանապահ պէտք է ըլլա՛ք եւ դիմաւորաբար կերպի՛ր որոնէ՛ք, որովհետեւ կայ ձեր շուրջը անձ մը, որ արգելի՛նք կ'ուզէ դնել ձեր նախաձեռն վրայ: Զգուշացէ՛ք շատախոսներէ:

☆ **ԱՂԵՂՆԱԻՈՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)

Նրէ կ'ուզէ՛ք ազգային ըլլա՛ք, գգուշացէ՛ք ձեր միակերպ ցրուելի: Կեցրեացէ՛ք մէկ աշխատանքի վրայ, որպէսզի արդիւնէ՛ք մը ստանա՛ք: Աշխատեցէ՛ք ուշադիր:

☆ **ԱՅԾԵՂՋԻՒՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)

Ինքնաշարժը վարեցէ՛ք ուշադիր: Հեղինակաւոր անձի մը գէ՛մ կեցելի հեռու կեցէ՛ք: Օրը նպատաւոր չէ՛. ինքնագլուխ մի՛ ըլլա՛ք:

☆ **ԾՈՎԱՆՈՅ** (21 Յունուարէն 19 Փետրուար)

Շատ ինքնագլուխ կ'աշխատախ, շուտով կ'ազդուի՛ք անկամաստ պատահարէ՛ք, ու առանց մէկտեղ կարծիք հարցընելու՝ կը դիմաւորուի՛ք: Ի՛նչ մը հասուն արտայայտութիւն ունեցէ՛ք:

☆ **ԶՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ)

Միշտ չղային է՛ք, ինչ որ կազդէ ձեր առողջութեան: Հանգստացէ՛ք, որովհետեւ այս ընթացքով չէ՛ք կրնար յաջողիլ:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒՒ 3464

Պատրաստեց՝ Տ. Մ. ԱՐԱՋԱՐԵԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ՈՒՂԱՆԱՅԵԱՅ

- Ներկակ:
- Իզական անուն - Աղւանական աղբիւրնի 16րդ տար:
- Արարական մայրաքաղաք - Երբեք (Հակ):
- Մագերին յարդարեն:
- Բաւարական մէկըրտնուի - Հայաստանի լեռներէն:
- Յանկարծական:
- Խանաւորի նահատակներէն - Կարապետ Դաւթեան - Հերիք - Թիւղիկի ստորագրութի

أما